

22.07.14

Համաձայն 'Տեղական հանրաքվեի մասին' ԼՂՀ օրենքի՝ Արցախի կառավարությունը ս.թ. հուլիսի 2-ին որոշում էր կայացրել 2014թ. հուլիսի 20-ին նշանակել և Մարտունու շրջանի ճարտար և Ղուզե ճարտար համայնքներում անցկացնել տեղական հանրաքվեներ՝ այդ համայնքները մեկ՝ ճարտար համայնքում միավորելու նպատակով:

Տեղական հանրաքվեների նախապատրաստման և անցկացման ծախսերը ֆինանսավորելու համար ԼՂՀ պետբյուջեով նախատեսված՝ կառավարության պահուստային ֆոնդից ԼՂՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովին հատկացվել է ավելի քան 1 մլն դրամ:

Որոշման կապակցությամբ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը հուլիսի 7-ին հրավիրել է արտահերթ նիստ, որտեղ քննարկվել և հաստատվել է հուլիսի 20-ին նշանակված՝ ԼՂՀ Մարտունու շրջանի ճարտար և Ղուզե ճարտար համայնքները միավորելու վերաբերյալ տեղական հանրաքվեների անցկացման քվեաթերթիկի նմուշը: Իսկ քվեաթերթիկի հարցադրումն այսպիսին էր. 'Համաձա՞յն եք, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտունու շրջանի ճարտար և Ղուզե ճարտար համայնքները միավորվեն մեկ՝ ճարտար համայնքում':

Կայանալիք հանրաքվեները պատշաճ մակարդակով կազմակերպելու և անցկացնելու համար ԼՂՀ ԿԸՀ-ի կողմից իրականացվել են մի շարք նախապատրաստական աշխատանքներ: Մասնավորապես, կայացել է հանդիպում այդ համայնքների հանրաքվեների տեղամասային հանձնաժողովների անդամների հետ, որի նպատակը պատասխանատուների հետ տեղական հանրաքվեի անցկացման առանձնահատկությունները քննարկելն էր, քվեարկության գործընթացի կազմակերպման ժամանակ ընտրությունների և հանրաքվեների նմանություններն ու տարբերությունները, փաստաթղթերի լրացման կարգը պարզաբանելը:

Եվ ահա եկավ նշանակված օրը՝ հուլիսի 20-ը: Վաղ առավոտից 'Ազատ Արցախ' թերթի ստեղծագործական խումբն արդեն ճարտարի և Ղուզե ճարտարի հանրաքվեների անցկացման տեղամասերում էր: Ընդհանուր առմամբ, ինչպես նկատեցինք, երկու համայնքներում էլ մարդկանց աշխույժ անցուղարձը, առանձին խմբերով հավաքվելն ու թե՛ քննարկումները փաստում էին, որ դարերի խորքից եկող ճարտար գյուղում պատմական իրադարձություն է տեղի ունենում: Հանգամանքների բերումով Լեռնային Ղարաբաղում անուն հանած և ամենախոշոր գյուղերից մեկը՝ ճարտարը, 1989-ին բաժանվեց երկու մասի կամ առանձին համայնքների, ինչի մասին այսօր ցավով են հիշում հնաբնակները: Ներկայումս երկրի կառավարությունը նրանց հնարավորություն է ընձեռել ճիշտ որոշում կայացնելու ու կրկին միավորվելու, միասին հզոր տնտեսություն ստեղծելու ու նախկին փառքը վերականգնելու համար:

Երկու համայնքների տեղամասային հանձնաժողովների նախագահների իրազեկմամբ՝ հանրաքվեն ընթանում է կազմակերպված ու հանգիստ պայմաններում: Քվեարկությունն սկսվել է ժամը 8.00-ին: Ճիշտ այդ պահին դրսում արդեն սպասում էին առաջին քվեարկողները: Առավոտյան ժամը 10-ի դրությամբ շուրջ 80 մարդ Ղուզե ճարտարից և 90-ը՝ ճարտարից կատարել էին իրենց քաղաքացիական պարտքը: Տեղական հանրաքվեն ընդհանուր, հավասար, ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա անցկացնելու նպատակով տեղամասերում էին նաև ԼՂՀ կենտրոնական ընտրական և Մարտունու տարածքային ընտրական հանձնաժողովների ներկայացուցիչները, ովքեր եկել էին մինչ տեղամասերի բացվելը: Հրավիրվել է նիստ, կատարվել աշխատանքի բաշխում, լրացվել են արձանագրությունները և իրականացվել մյուս աշխատանքները:

Նշենք, որ 'Տեղական հանրաքվեի մասին' ԼՂՀ օրենքի 35-րդ հոդվածի համաձայն՝ տեղական հանրաքվեի դրված՝ 'Համաձա՞յն եք, որ ճարտար և Ղուզե ճարտար համայնքները միավորվեն մեկ՝ ճարտար համայնքում' հարցը կհամարվի ընդունված, եթե կողմ է քվեարկության մասնակիցների կեսից ավելին, բայց ոչ պակաս, քան յուրեքերկուսը: Ընդ որում՝ հանրաքվեի արդյունքներն ամփոփվում են յուրաքանչյուր համայնքում առանձին-առանձին: ճարտարի համայնքում քվեարկողների թիվը կազմում է 1742, իսկ Ղուզե ճարտարում՝ 1313 մարդ:

Տեղամասային հանձնաժողովների նախագահներ Վարուժան Գևորգյանն ու Սերժիկ Մարգարյանը, արտահայտելով սեփական տեսակետը, նշեցին, որ կողմ են միավորմանը: Խորհրդային տարիներին ընդամենը մեկ համայնք կար՝ ճարտար անունով, որը տնտեսապես զարգացած ու հզոր էր: 'Մենք նախկինում եղել ենք միասին և այդպես էլ պիտի լինենք: Մեր գյուղի մասին լեգենդներ էին պատմում: Պետք է ամեն ինչ անենք, որպեսզի վերականգնվի նախկին ճարտարի փառքը: Այսօր տեղի ունեցող հանրաքվեն հենց այդ նպատակն է հետապնդում, արվում է բնակչության բարեկեցության համար',- համոզված են իմ զրուցակիցները:

Երկու համայնքների բնակչության մեծ մասի մոտ այն միտումը կա, որ միավորվելու դեպքում ճարտարի համայնքը քաղաքի կարգավիճակ կստանա: Այդպես են մտածում նաև համայնքների ղեկավարները: Արթուր ԱՂԱԲԵԿՅԱՆ, Ղուզե ճարտարի համայնքի ղեկավար.

- Ողջունելի իրադարձություն է: Այս հանրաքվեն տեղի է ունենում ժողովրդի կամքով: Մեզ ոչ ոք չի պարտադրել: Երկու համայնքների բնակչությունը գիտակցում է, որ միավորումն է իր ապագան: Երկու տարի է՝ խոսում ենք այդ մասին, բայց գործնական քայլ չի արվում: Վերջապես հնարավորություն տրվեց մեր կամքն արտահայտելու: Միավորվելու դեպքում կաճի տեղական բյուջեն, ծախսային մասի ամուսնով հնարավորությունները կավելանան, ինչը համայնքին կտանի դեպի զարգացում: Այսօրվա դրությամբ պետությունից դոտացիա չենք ստանում: Հույս ունենք, որ միավորվելուց հետո ճարտարի համայնքը

քաղաքի կարգավիճակ կստանա, պետության ուշադրությունն էլ ավելի կմեծանա, աշխատատեղեր կբացվեն:

Վալերի ԲԱԲԱՅԱՆ, Ղուզե ճարտարի բնակիչ.

- Իմ ծննդյան օրից ես ապրել եմ Գյունե, Ղուզե, Վերին և մյուս ճարտարների հետ 'միացած', համերաշխ:

Տարբերություն չեմ դրել: Միանշանակ կողմ եմ միավորմանը և քվեարկել եմ բոլորի աջքի առաջ՝

ցուցադրաբար: Ինչու պիտի ապրենք բաժան-բաժան, նույն ժողովուրդն ենք: Ի՞նչ Ղուզե, ի՞նչ Գյունե...

Աղջիկ ենք տալիս, աղջիկ ենք բերում, իրար հետ կողք կողքի ապրում... Կողմնակի բառերը պետք է կողքից հանել և ընդհանուր մեկ ճարտար դարձնել: Ես այդպես եմ տեսնում մեր ապագան:

Ադավիա ԱԲՐԱՀԱՄՅԱՆ, Ղուզե ճարտարի բնակչուհի.

- Միշտ եղել ենք միասին, աշխատանքային կոլեկտիվում՝ միասին, մեր երեխաները միասին սովորում են

ավագ դպրոցում: Մեր գյուղը՝ ճարտարը, ժամանակին էլ համարյա թե քաղաք է եղել. ունեցել ենք քաղաքատիպ բաղնիք, տիպային հիվանդանոց, հյուրանոց, մշակույթի տուն... Այնպես որ՝ վնաս չկա քաղաք դառնալուց: Մեկ է՝ մենք էլի գնալու ենք դաշտերը մոշ և այլ հատապտուղներ հավաքելու:

Նինա ՄՈՒՍԱՅԵԼՅԱՆ, Ղուզե ճարտարի բնակչուհի.

- Ես հարս եմ եկել Ղուզե ճարտար գյուղը: Վեց երեխա ունեմ և այսօր մտածում եմ իմ երեխաների ապագայի մասին: Գտնում եմ, որ միավորումից կշահեն բոլորը, իսկ առաջին հերթին՝ ապագա սերունդը: Ես և իմ ամուսինը չենք աշխատում: Իսկ քաղաքի կարգավիճակ ստանալով՝ ճարտարում աշխատատեղեր կբացվեն:

Վլադիկ ՉՈՎՅԱՆՆԻՍՅԱՆ, ճարտարի համայնքի ղեկավար.

- 1997 թվականից գյուղապետ եմ: 2300 բնակիչ ունի ճարտարը, շատ հին, պատմական գյուղ է՝

արհեստականորեն երկու մասի բաժանված: Եկել է պահը կրկին միավորվելու, միասին մեր խնդիրները լուծելու: Հետագայում համայնքին քաղաքի կարգավիճակ տալը դրական եմ համարում, քանի որ ինչպես Ղարաբաղի մյուս քաղաքները՝ զուգար կտրամադրվի բարեկարգման, սոցիալ-կենցաղային հարցերի լուծման համար: Բոլոր դեպքերում՝ միասին ավելի հզոր կլինենք: Կրկնում եմ՝ սա մի համայնք է, և բաժանելը սխալ էր:

Լեոնարդ ՏՈՆՅԱՆ, ճարտարի միջնակարգ դպրոցի տնօրեն.

- Համայնքի բարգավաճման ու հետագա զարգացման համար միավորվելը միանգամայն ճիշտ քայլ է: Իսկ քաղաքի կազմավիճակ ունենալն էլ իր հերթին կնպաստի համայնքի զարգացմանը, երիտասարդները կմնան, կհիմնավորվեն այստեղ:

Սիրանուշ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ, ճարտարի բնակչուհի. - Մեծ սիրով եմ եկել մասնակցելու հանրաքվեին: Ավարտել եմ 'Ֆինանսներ և բանկային գործ' բաժինը, բայց առայսօր չեմ աշխատում, աշխատատեղ չկա: Համոզված եմ, որ քաղաքի կարգավիճակ ստանալու դեպքում մեզ՝ երիտասարդներիս համար աշխատատեղեր կբացվեն, կյանքը հետաքրքիր կդառնա:

Գյուլչորա ՔԱՄԱԼՅԱՆ, ճարտարի բնակչուհի. - Կողմ եմ համայնքների միավորմանը: Ես ճարտարի վերին գյուղից եմ, որտեղ ջուր չկա: Համայնքի ղեկավարն այնտեղ ապրողներին համար ամեն օր ցիստեռնով ջուր է ուղարկում: Հույս ունենք, որ միավորվելու դեպքում ամեն ինչ կփոխվի դեպի դրականը, դեպի լավը: Իսկ այսօր, կարելի է ասել, մենք զոյատևում ենք, քանի որ չեմ աշխատում, աշխատատեղ չկա, իսկ թոշակի տարիքից էլ դեռ հեռու եմ: Ճարտարցին միշտ էլ եղել է աշխատասեր: Պետք է հնարավորություն տալ աշխատելու:

Լարիսա ԲԱՂՂԱՍՐՅԱՆ, ճարտարի բնակչուհի. - Ես նույնպես վերին գյուղից եմ և միայն մտածում եմ ջուր ունենալու մասին: Տարիքս առած կին եմ, բայց ամեն օր մի քանի կիլոմետր ճանապարհ եմ կտրում մի քանի լիտր ջուր բերելու համար: Դե եթե համայնքները միավորվեն՝ կարծում եմ ջրի խնդիրն էլ կլուծվի:

Այն մասին, որ միավորվել ու մեկ համայնք դառնալը բնակչության ցանկությունն է, գրույցի ընթացքում հավաստիացրեց Մարտունու շրջվարչակազմի ղեկավար Նելսոն Սողոմոնյանը: Դրական քայլ համարելով անցկացվող հանրաքվեն, նա ասաց, որ դեռևս երկու ամիս առաջ ճարտարի մշակույթի պալատում ԼՂՀ կառավարության ղեկավարի հետ կայացած հանդիպման ժամանակ բնակչության գերակշիռ մասը համաձայն էր միավորվելուն: Նրա խոսքով՝ կան մի շարք ծրագրեր, որոնք նախատեսվում է իրագործել գյուղի ռուսաստանաբնակ բարերարների աջակցությամբ. ջրամատակարարման միասնական համակարգի կառուցում, ներհամայնքային ճանապարհների բարեկարգում, հիվանդանոցի վերանորոգում և այլն: 'Ես դա համարում եմ ճիշտ քայլ,- ասաց Ն. Սողոմոնյանը:- Առաջարկություններ ունեմ ուրիշ համայնքների խոշորացման առումով: Դա ոչ միայն հեշտացնում է կառավարման գործընթացը, այլև կարծում ընդհանուր նպատակին հասնելու ճանապարհը':

Հնարավոր՞ է ճարտարների միավորումը օրինակ ծառայի այլ համայնքների խոշորացման համար՝ Մարտունու շրջվարչակազմի ղեկավարն ասաց. 'Կարծում եմ, այո: Ինձ մշտապես մտահոգել է ճարտարների հետագա տնտեսական առաջընթացը: Այսօրվա կարգավիճակով գյուղատնտեսության բնագավառում համայնքներում առաջընթաց չեմ նկատում: Գյուղացին պետք է անասուն պահի, մեղվաբուծությամբ, թռչնաբուծությամբ զբաղվի... Եթե դա հնարավոր չէ, պայմաններ չկան, ուրեմն պետք է մտածել համայնքի կարգավիճակի մասին և տնտեսապես զարգանալու համար այլ ճյուղեր ընտրել: Իսկ նման պայմաններում քաղաք դառնալու անհրաժեշտությունն անխուսափելի է':

Դե ինչ, առաջին և թերևս ամենագլխավոր քայլն արված է. ԼՂՀ ԿԸՀ-ից մեզ հայտնեցին, որ հանրաքվեն կայացել է: Մնում է սպասել ճարտարի համայնքի կարգավիճակին, որը պետք է որոշեն օրենսդիրները: